

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ալեքսանյան Միքայել Սերյոժայի

*Հեռանկարային գազային սենսորներ՝ մետաղօքսիդային նանոկոմպոզիտների
հիման վրա*

Ա.04.10 - «Կիսահաղորդիչների ֆիզիկա» մասնագիտությամբ
տեխնիկական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORTS OF THE RA
YEREVAN STATE UNIVERSITY

Aleksanyan Mikayel

Prospective gas sensors based on metal oxide nanocomposites

Thesis for the degree of Doctor of technical sciences
Specialty 01.04.10 - "Semiconductor Physics"

Abstract

YEREVAN-2023

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդում:

Պաշտոնական

ընդդիմախոսներ

տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գ.Շ. Շմավոնյան

տեխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս.Խ. Խուդավերդյան

ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Վ.Վ. Հարությունյան

Առաջատար

կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների

ինստիտուտ

Պաշպանությունը կայանալու է 2023 թ. հունիսի 10-ին ժամը 12-ին, Երևանի Պետական Համալսարանում գործող Ֆիզիկայի 049 Մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2023 ապրիլի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար



ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
Վ.Պ. Քալանթարյան

The thesis theme is approved at the Academic Council of the Radiophysics Department of the Yerevan State University

Official opponents:

Doctor of Technical Sciences, prof.

G.S. Shmavonyan

Doctor of Technical Sciences, prof.

S.K. Khudaverdyan

Doctor of Phys. Math. Sciences, prof.

V.V. Harutyunyan

Leading organization:

Institute For Physical Research (NAS RA)

The defense of the thesis will take place at 12:00 on 10 June 2023 on the session of the Specialized Council 049 Physics of the Yerevan State University.

Address: 1 Alek Manukyan Street, 0025 Yerevan, Armenia.

The thesis is available in the library of the Yerevan State University.

The abstract is distributed on 25 April 2023.

Scientific secretary of
the Specialized Council



Candidate of Phys. Math. Sciences,
Associate Prof. V.P. Kalantaryan

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Թեմայի արդիականությունը

Ներկայումս սրբնթաց զարգանում են արդյունաբերության գրեթե բոլոր ուղղությունները, որի արդյունքում օրեցօր մեծանում է լավարկված սարքավորումների ստեղծման և զարգացման պահանջարկը, որը կրերի մարդկային կենսագործունեության կազմակերպման ավելի բարձր մակարդակի: Այս տեսանկյունից առավել կարևոր են մարդու առողջության և անվտանգության հետ կապված խնդիրները, որոնց ապահովման հիմնական երաշխիքը հուսալի անվտանգային համակարգերի ներդրումը և դրանց ճշգրիտ կառավարումն է: Նման համակարգերի հիմնական, կարևորագույն բաղադրիչները սենսորներն են, որոնց ֆիզիկական բնութագրերից է կախված ամբողջ համակարգի աշխատունակությունը: Խնդիրը էլ ավելի է կարևորվում, երբ խոսքը գնում է մարդկային գործունեության ոլորտներում թունավոր, պայթյունավտանգ զազերի, ցնդող օրգանական միացությունների և այլ տեսակի նյութերի գոլորշիների հայտնաբերման և դրանց կոնցենտրացիաների չափման մասին: Այսպիսով, բարձր զգայունությամբ, ընտրողունակությամբ, կայունությամբ, փոքր չափսերով և դյուրակիր գազային սենսորների պատրաստման տեխնոլոգիաների մշակումը և դրանց հիման վրա սենսորների պատրաստումն ու կիրառումը խիստ արդիական խնդիրներ են:

Գազային սենսորների նախագծման և զազազգայունության պարամետրերի բարելավման համար առաջարկվող հիմնական մոդելները ներառում են երկու կարևորագույն բաղադրիչներ. զազազգայուն նյութի ճիշտ ընտրություն՝ հիմնված տվյալ զազի նկատմամբ նյութի քիմիական ակտիվության վրա (աղսորբջիռն/դետորբջիռն երևույթներ, քիմիական ռեակցիաներ) և զազազգայուն նյութի համապատասխան միկրոկառուցվածքի ընտրություն հաշվի առնելով զազազգայուն մատրիցում թիրախային զազի դիֆուզիոն պրոցեսները [1]: Չնայած այն բանի, որ այս մոդելների շրջանակներում նորագույն տեխնոլոգիաների և կոմպոզիտային նյութերի վրա հիմնված սենսորների ստեղծման ուղղությամբ կատարվել և կատարվում են մեծածավալ աշխատանքներ, սակայն արդի պահանջներին ամբողջությամբ բավարարող պարամետրերով սենսորներ դեռևս չկան: Գազազգայունությունը որոշվում է ֆիզիկաքիմիական և կառուցվածքային բազմաթիվ գործոնների միաժամանակյա ազդեցությամբ, որոնց օպտիմալ համադրությունը կրերի սենսորի աշխատունակության բարձր մակարդակի [2]:

Աշխատանքի հիմնական նպատակները

Նախագծել և զարգացնել թունավոր, պայթյունավտանգ զազերի, ցնդող օրգանական միացությունների և այլ նյութերի գոլորշիների նկատմամբ բարձր արդյունավետությամբ օժտված կիսահաղորդչային ռեզիստիվ սենսորներ հիմնված միաչափ, երկչափ և եռաչափ ևսուկառուցվածքների և կոմպոզիտային նյութերի վրա: Հանգամանորեն հետազոտել պատրաստված սենսորների էլեկտրաքիմիական և զազազգայունության պարամետրերը և հնարավոր տեխնոլոգիական մեթոդները, որոնք կհանգեցնեն ավելի լավարկված պարամետրերով սենսորային համակարգերի ստեղծման:

Աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները

1. Մինթեզել կիսահաղորդչային միա- և բազմակոմպոնենտ նանոկառուցվածքներ, որոնք բարձր զգայունություն, կայունություն և ընտրողունակություն կցուցաբերեն թունավոր, պայթյունավտանգ գազերի, ցնդող օրգանական միացությունների և այլ տեսակի նյութերի գոլորշիների նկատմամբ:
2. Հետազոտել և վերլուծել սինթեզված նյութերի կառուցվածքային և էլեկտրաֆիզիկական պարամետրերը:
3. Մշակել և զարգացնել տեխնոլոգիական ռեժիմներ՝ ստացված կառուցվածքներից կիսահաղորդչային ռեզիստիվ սենսորների պատրաստման և դրանց բնութագրերի հեշտ կառավարման համար:
4. Հետազոտել պատրաստված սենսորների զագագայունության պարամետրերը և դրանց աշխատունակության պայմանները՝ դրանք ենթարկելով մանրակրկիտ լաբորատոր փորձարկման:
5. Ձեռք բերված փորձարարական տվյալների և դրանց ուսումնասիրությունների արդյունքում վեր հանել զագագայունության պարամետրերի լավարկմանն ուղղված խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

Ստացված արդյունքների գիտական նորույթը

1. Մշակվել է նոր տեխնոլոգիական ռեժիմներ, որոնցով հաջողվել է ստանալ կառավարելի պարամետրերով միա- և բազմակոմպոնենտ նանոկառուցվածքներ, որոնց տվյալ բաղադրություններն առաջին անգամ օգտագործվել են որպես զագագայուն նյութեր տվյալ գազի հայտնաբերման համար:
2. Մշակվել է զագային սենսորների պատրաստման նոր կամ լավարկված տեխնոլոգիական մեթոդներ և հաջողվել է պատրաստել բարձր արդյունավետությամբ աշխատող սենսորային համակարգեր, որոնց հիմնական բնութագրերը, ինչպիսիք են զգայունությունը, զգայունության նվազագույն շեմը, արագագործությունը, ընտրողունակությունը և աշխատանքային ջերմաստիճանը, համեմատած առկա այլ սենսորների բնութագրերի հետ, էականորեն բարելավվել են:

Աշխատանքում ներկայացված հետազոտությունների գործնական արժեքը

1. Մինթեզված կիսահաղորդչային նանոկառուցվածքները գործնականում կիրառելի են զագային սենսորներում շնորհիվ պարամետրերի կայունության և ցածր ինքնարժեքի:
2. Այստեղ օգտագործվող նանոկոմպոզիտային նյութերի քիմիական և մեխանիկական կայունությունը, ինչպես նաև դրանց ոչ թունավոր լինելը թույլ են տալիս դրանց հիման վրա պատրաստված սենսորների երկարատև և անվտանգ կիրառում իրական միջավայրերում:
3. Սենսորներում որպես զագագայուն համակարգ օգտագործվող մետաղօքսիդների և դրանց հիման վրա նանոկոմպոզիտային նյութերի ցածր ինքնարժեքը և կիրառությունը հարակից այլ ոլորտներում բերում են մեր սենսորների գործնական

կիրառման լայն հնարավորության և համատեղելիության այլ տեխնոլոգիաների հետ:

4. Մշակված նանոկառուցվածքային սենսորներն ունեն փոքր չափսեր, դյուրակիր են և օգտագործման համար անվնաս, որոնք գործնական կիրառության համար կարևորագույն չափորոշիչներ են:
5. Զգայուն նյութերի և սենսորային համակարգերի պատրաստման տեխնոլոգիան բավական պարզ է, էժան և փոքր մասշտաբներից մեծին անցնելու հնարավորությամբ օժտված, որոնք թույլ են տալիս ունենալ ցածր ինքնարժեքով, բարձր վերարտադրելիությամբ օժտված, գործնականում կիրառելի սենսորներ:

Պաշտպանությանը ներկայացված հիմնական դրույթները

1. Բազմապատ ածխածնային նանոխողովակների (ԲԱՆՆ) և ZnO-ի տարբեր կոնցենտրացիաների ներմուծումը համապատասխանաբար SnO₂-ի և Fe₂O₃-ի մեջ ապահովել են ջրածնի նկատմամբ բարձր գազազգայունություն (S=R_{on}/R_{gas}) (մինչև 500):
2. Կշռ. 20 % Nb₂O₅-ի ներմուծումը SnO₂-ի մեջ և ուլտրամանուշակագույն (ՈւՄ) ճառագայթների առկայությունը գազազգայուն նանոկառուցվածքի մակերևույթին իջեցրել են հեղուկացված նալթային գազի (ՀՆԳ) սենսորի աշխատանքային ջերմաստիճանը (50 °C-ով) և բարձրացրել գազազգայունությունը (մինչև 45 %) ու արագագործությունը (արձագանքման ժամանակը ըուպեններից նվազել է մինչև վայրկյաններ):
3. Տարբեր կոնցենտրացիաներով Ru(OH)Cl₃ կատալիզային նյութի հավելումը ԱՆՆ (ածխածնային նանոխողովակներ)/SnO₂ նանոկառուցվածքային սենսորի մակերևույթին բերել է իզոթրոսն գազի նկատմամբ սենսորի գազազգայունության (2.5 անգամ) ու արագագործության (արձագանքման ժամանակը ըուպեններից նվազել է մինչև վայրկյաններ) բարելավման և աշխատանքային ջերմաստիճանի նվազման (50 °C-ով):
4. Ga₂O₃:SnO₂-ի ներմուծումը In₂O₃-ում, ԲԱՆՆ-ներինը՝ Fe₂O₃-ում, Co₂O₃-ինը՝ SnO₂-ում և La₂O₃-ինը՝ ZnO-ում բերել են դրանց բարձր գազազգայունության (մինչև 300) էթանոլի գուրոշիների նկատմամբ:
5. ՈւՄ ճառագայթների առկայությունն էականորեն բարելավել է ացետոնի՝ Fe₂O₃+0.1առ. % Sn նանոկառուցվածքային սենսորի պարամետրերը (արձագանքման ժամանակը ըուպեններից նվազել է մինչև վայրկյաններ, իսկ գազազգայունությունը՝ հասել մինչև 4.2):
6. Fe₂O₃:ZnO (60:40 մոլ. %) նանոկառուցվածքային սենսորի՝ ամոնիակի նկատմամբ գազազգայունության նվազագույն շեմը 250 °C աշխատանքային ջերմաստիճանում եղել է 14 ppm:
7. Co₂O₃-ի և ԲԱՆՆ-ների տարբեր կոնցենտրացիաների ներմուծումը SnO₂-ի մեջ և ՈւՄ ճառագայթների առկայությունը գազազգայուն մակերևույթին բերել են ջրածնի պերօքսիդի նանոկառուցվածքային սենսորների բնութագրերի լավարկման (գազազգայունությունն աճել է 1.5 անգամ):

8. La_2O_3 -ի տարբեր կոնցենտրացիաներով հագեցած ZnO -ի հիման վրա պատրաստված նանոկառուցվածքային սենսորներից առավելագույն զազագայունություն (120) ցուցաբերել է $\text{ZnO}<2$ առ. % La կառուցվածքը:
9. Համապատասխան տեխնոլոգիական ռեժիմների ընտրությամբ ստացվել է կոբալտով հագեցած և ածխածնային նանոխողովակներով ֆունկցիոնալացված SnO_2 -ի այնպիսի նանոկառուցվածքներ, որոնք քիմիական ազդանյութերի նկատմամբ ցուցաբերել են բարձր զազագայունություն (մինչև 400):
10. Մագնետրոնային փոշեցրման տեխնոլոգիական ռեժիմների (զեներատորի հզորություն, փոշեցրման ժամանակ, տակդիրի ջերմաստիճան և այլն) ճիշտ մշակումը բերել է $\text{Fe}_2\text{O}_3:\text{Zn}$ բազմաբյուրեղային նյութի և ածխածնային նանոկառուցվածքների հաջող սինթեզման:

Տպագրությունները

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են 28 գիտական աշխատանքներում, 17 գիտաժողովներում և 5 արտոնագրերում:

Ատենախոսության թեմայով տպագրված աշխատանքները ներկայացված են ատենախոսության վերջում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից և 260 անուն պարունակող գրականության ցանկից: Աշխատանքում առկա են 176 նկար և 18 աղյուսակ, իսկ աշխատանքի ընդհանուր ծավալը 260 էջ է:


Աշխատանքի բովանդակությունը

Ներածական մասում ներկայացված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը և առաջադրված ու լուծված խնդիրները, ցույց է տրված ստացված արդյունքների գիտական նորությունը և գործնական արժեքը, ինչպես նաև բերված են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները:

Առաջին գլխում ներկայացված են այժմ առկա զազային սենսորների տեսակները, կիսահաղորդչային մետաղօքսիդային զազային սենսորների կառուցվածքը և առանձնահատկությունները: Այստեղ ներկայացված են նաև բազում գործոնների ազդեցությունը սենսորի զազագայունության պարամետրերի վրա, ինչպիսիք են զգայուն թաղանթի հաստությունը, հատիկների չափսերը, զազագայուն նյութի մակերևույթի կազմաբանությունը և այլն: Այստեղ նաև ներկայացված են վերջին տարիներում տարբեր հեղինակների կողմից առաջարկված թունավոր/պայթյունավտանգ զազերի, ցնդող օրգանական միացությունների և ջրածնի պերօքսիդի սենսորների բնութագրերը:


Երկրորդ գլխում ներկայացված են մեր կողմից մշակված ջրածնի, հեղուկացված նավթային գազի և բութանի նկատմամբ զգայուն սենսորների պատրաստման տեխնոլոգիան, ինչպես նաև ստացված զգայուն նյութերի կառուցվածքային, էլեկտրաքիմիական և զազագայունության բնութագրերը: Այստեղ ներկայացված են նաև վերը նշված զազերի զազագայունության մեխանիզմները և դրանց վրա ազդող

հնարավոր գործոնները: Մասնավորապես մշակվել է տեխնոլոգիա SnO_2 -ով ֆունկցիոնալացված բազմապատ ածխածնային նանոխողովակների (ԲԱՆԽ) և $\text{WO}_3\text{-SnO}_2$ կուրթի հիման վրա ջրածնային սենսորների պատրաստման համար: Պոլիկոոր/ԲԱՆԽ/ $\text{SnO}_2(1:66)/\text{Pd}$ և պոլիկոոր/ $\text{WO}_3\text{-SnO}_2(1:9)/\text{Pd}$ սենսորների արձագանքի ($S=R_{\text{air}}/R_{\text{gas}}$) կախվածությունները թիրախային գազերի կոնցենտրացիաներից բերված են Այ. 1-ում: Ինչպես տեսնում ենք, պոլիկոոր/ԲԱՆԽ/ $\text{SnO}_2(1:66)/\text{Pd}$ կառուցվածքի դեպքում ունենք բավական մեծ զգայունության արժեքներ (ավելի քան 400) և հագեցման բնութագիր, մինչդեռ պոլիկոոր/ $\text{WO}_3\text{-SnO}_2(1:9)/\text{Pd}$ սենսորն ունի գրեթե գծային բնութագիր, սակայն ավելի ցածր զգայունություն:




Այ. 1 Պոլիկոոր/ԲԱՆԽ/ $\text{SnO}_2(1:66)/\text{Pd}$ (a) և պոլիկոոր/ $\text{WO}_3\text{-SnO}_2(1:9)/\text{Pd}$ (b) սենսորների գազազգայունության կախվածությունը ջրածնի կոնցենտրացիայից 300 °C-ում:

$\text{Fe}_2\text{O}_3\text{:ZnO}$ կուրթի հիման վրա պատրաստվել է նանոկառուցվածքային գազային սենսոր և հանգամանորեն ուսումնասիրվել դրա գազազգայունության բնութագրերը





Այ. 2 $\text{Fe}_2\text{O}_3\text{:ZnO}$ սենսորի լուսանկարը (a) և սխեմատիկ պատկերը (b):

ջրածնի տարբեր կոնցենտրացիաների արկայությամբ աշխատանքային տարբեր ջերմաստիճաններում: $Fe_2O_3:ZnO$ (60:40 կշռ. %) սենսորի լուսանկարը և սխեմատիկ պատկերը համապատասխանաբար ներկայացված են Նկ. 2-ի a)-ում և b)-ում: Չափվել է սենսորի արձագանքը $200^\circ C$ աշխատանքային ջերմաստիճանում ջրածնի կոնցենտրացիայի 75-ից 2000 ppm տիրույթում (Նկ. 3): Ինչպես երևում է նկարից, սենսորը բոլոր կոնցենտրացիաների դեպքում ցուցաբերել է հստակ արձագանքման և վերականգնման բնութագիր և բարձր արագագործություն ($S=1137$, $n=2000$ ppm, $t_{\text{արձ}}=48$ վ.):




Նկ. 3 $Fe_2O_3:ZnO$ սենսորի դիմադրության փոփոխությունը ջրածնի տարբեր կոնցենտրացիաների դեպքում $200^\circ C$ աշխատանքային ջերմաստիճանում:

Պատրաստվել են նաև ջրածնի ձկուն գազային սենսորներ $FuNi_3:SnO_2$ (5:95 կշռ.%) կոմպոզիտային կյութի հիման վրա և հետազոտվել դրանց գազազգայունության և էլեկտրաքիմիական պարամետրերը: Ձկուն սենսորի պատրաստման տեխնոլոգիական քայլերը և լուսանկարները ներկայացված են Նկ. 4-ում: Չափվել է սենսորի զգայունությունը ջրածնի 25-3000 ppm կոնցենտրացիաների տիրույթում տարբեր աշխատանքային ջերմաստիճաններում և համվել այդ ջերմաստիճաններում արձագանքի կախվածությունը կոնցենտրացիայից (Նկ. 5): Մենսորն արձագանքել է նույնիսկ 25 ppm ջրածնի նկատմամբ, որի դեպքում զգայուն շերտի դիմադրությունը փոխվել է ավելի քան 2.5 անգամ: Բոլոր ջերմաստիճաններում սենսորը ցուցաբերել է արձագանքման գրեթե զգային բնութագիր կախված կոնցենտրացիայից: Ենթադրվում է [3], որ $FuNi_3$ -ների ներմուծումը SnO_2 -ի մեջ անագի օքսիդի արագելված գոտում առաջացնում են լրացուցիչ էներգիական մակարդակներ, որին կարելի է վերագրել ավելի փոքր էներգիական գոտով էֆեկտիվ արգելված գոտի: Այս դեպքում $FuNi_3$ -ները SnO_2 -ին օժտում են չափելի էլեկտրական դիմադրությամբ և միաժամանակ մեծացնում զգայուն շերտի արդյունաբար մակերեսը, որը բերում է զգայունության և արագագործության էական մեծացման:




Նկ. 4 $MWCNT:SnO_2$ սենսորի պատրաստման տեխնոլոգիական քայլերը (a) և լուսանկարները (b):




Նկ. 5 $MWCNT:SnO_2$ սենսորի դիսադրության փոփոխությունը ժամանակի ընթացքում ջրածնի տարբեր կոնցենտրացիաների առկայությամբ $50\text{ }^\circ\text{C}$ -ում (a), սենսորի արձագանքման կորերը իրական ժամանակում $100\text{ }^\circ\text{C}$ -ում (b), սենսորի դիսադրության փոփոխությունը ժամանակի ընթացքում ջրածնի տարբեր կոնցենտրացիաների առկայությամբ $150\text{ }^\circ\text{C}$ -ում (c), սենսորի արձագանքման կախվածությունը կոնցենտրացիայից տարբեր ջերմաստիճաններում (d):

Որպես մագնետրոնային փոշեցրման թիրախ, պինդֆազային ռեակցիայի սինթեզման եղանակով պատրաստվել է $\text{SnO}_2:\text{Nb}$ (80:20 կշռ.%) կիսահաղորդչային միացություն: Բարձրիաճախային մագնետրոնային փոշեցրման եղանակով ստացված թիրախից պատրաստվել է հեղուկացված նավթային գազի (ՀՆԳ) նկատմամբ զգայուն սենսոր: 200°C -ից ցածր ջերմաստիճաններում, նույնիսկ ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ, սենսորը գրեթե զգայունություն չի ցուցաբերել ՀՆԳ-ի նկատմամբ: ՈւՄ ճառագայթները 300°C և 250°C աշխատանքային ջերմաստիճաններում բարելավել են սենսորի արձագանքը: Սենսորի օպտիմալ ջերմաստիճան ընտրվել է 250°C -ը, որտեղ այն ցուցաբերել է համեմատաբար բարձր զգայունություն, արագագործություն և ցածր սպառման հզորություն՝ համեմատած 300°C -ում սպառած հզորության հետ: ՀՆԳ-ի տարբեր կոնցենտրացիաների նկատմամբ և ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ չափվել է նաև սենսորի արձագանքը ($S = ((R_{\text{on}} - R_{\text{off}}) / R_{\text{on}}) \times 100\%$) 250°C աշխատանքային ջերմաստիճանում: Սենսորը զգայունություն է ցուցաբերել ՀՆԳ-ի նկատմամբ 5000 ppm կոնցենտրացիայից սկսած և կախվածությունը գրեթե գծային է: Նույնիսկ 5000 ppm ՀՆԳ-ի առկայությամբ, սենսորի արձագանքը բավական բարձր է՝ 15 %, իսկ 30 000 ppm կոնցենտրացիայի դեպքում այն գերազանցում է 45 %-ը (Նկ. 6):




Նկ. 6 $\text{SnO}_2:\text{Nb}$ սենսորի զգայունության կախվածությունը ժամանակից ՀՆԳ-ի տարբեր կոնցենտրացիաների առկայությամբ 250°C աշխատանքային ջերմաստիճանում:

Պատրաստվել է իզոբութանի սենսոր հիմնված կոմպոզիտային ԱՆԽ (ածխածնի նանոխողովակներ)/ SnO_2 կառուցվածքի վրա: Զուլ-գել եղանակով պատրաստվել է կոմպոզիտային ԱՆԽ/ SnO_2 միացություն օգտագործելով քիմիական եղանակով նախապես աճեցված ԱՆԽ-ներ (Ecole Polytechnique Fédérale de Lausanne, Lausanne, Switzerland): Սենսորի մակերևույթը պատվել է 0.01 մոլ և 0.03 մոլ չափաբաժնով $\text{Ru}(\text{OH})\text{Cl}_3$ -ի ծածկույթով՝ որպես զգայունությունը բարելավող կատալիզ: Հանվել են ստացված ածխածնային նանոխողովակների ՏԷՄ (տեսածրող էլեկտրոնային մանրադիտակ) պատկերները և այստեղ դրանց տրամագիծը մոտ 100 նմ է, իսկ երկարությունը՝ 1-2 մկմ (Նկ. 7):



Նկ. 7 Մտացված ածխածնային նանոկառուցվածքների SEI պատկերները:




Նկ. 8 $\text{SnO}_2/\text{FUSN}/\text{Pd}$ սենսորի արձագանքը 5000 ppm իզոբութանի նկատմամբ սենսորի մակերևույթը 0.01 մոլ (a) և 0.03 մոլ $\text{Ru}(\text{OH})\text{Cl}_3$ (b) կատալիզային նյութով հագեցման դեպքում:

Հանվել են $\text{SnO}_2/\text{FUSN}/\text{Pd}$ սենսորի արձագանքման բնութագրերը կատալիզային նյութի տարբեր կոնցենտրացիաների դեպքում (0.01 մոլ և 0.03 մոլ $\text{Ru}(\text{OH})\text{Cl}_3$) (Նկ. 8):


Առավելագույն զգայունությունը դիտվել է 0.03 մոլ $Ru(OH)Cl_3$ կոնցենտրացիայով կատալիզային նյութի դեպքում, սակայն այս դեպքում արձագանքման ժամանակները եղել են բավական մեծ՝ 2-3 ր., մինչդեռ 0.01 մոլ $Ru(OH)Cl_3$ կատալիզային նյութով հազեցած սենսորի համար դրանք եղել են 30-40 վ.: 0.03 մոլ $Ru(OH)Cl_3$ -ով հազեցած $SnO_2/FU\text{ՆՆ}/Pd$ սենսորի արձագանքման ժամանակները բարելավելու համար այն թողնվել է իզոթրոսանի միջավայրում 24 ժամ, որից հետո դիտվել է վերականգնման ժամանակների էական նվազում:

Երրորդ գլխում ներկայացված են մեր կողմից մշակված սենսորների բնութագրերը, որոնք զգայունություն են ցուցաբերել ցնդող օրգանական միացությունների նկատմամբ, ինչպիսիք են էթանոլը, ացետոնը և ամոնիակը: Այստեղ հանգամանորեն ներկայացված են զազագազայուն նյութերի կառուցվածքի, բաղադրության և այլ ֆիզիկական հատկությունների վերաբերյալ հետազոտման արդյունքները: Այստեղ ներկայացված են նաև պատրաստված սենսորների զգայունության, կայունության, արագագործության և ընտրողունակության բնութագրերը՝ վերը նշված զազերի համար: Մասնավորապես պինդֆազային ռեակցիայի սինթեզման եղանակով պատրաստվել է $In_2O_3-Ga_2O_3-SnO_2$ (70:20:10 կշռ.%) մագնետրոնային փոշեցրման թիրախ: Ստացված թիրախից բարձրհաճախային մագնետրոնային փոշեցրման եղանակով կստեղծվել է բարակ, զազագազայուն շերտ: Սենսորը բավական մեծ զգայունություն (41) է ցուցաբերել 5000 ppm էթանոլի նկատմամբ 250 °C-ում, միևս այդ նույն ջերմաստիճանում ացետոնի նկատմամբ զգայունությունը եղել է 6.5 (Նկ. 9):




Նկ. 9 $In_2O_3-Ga_2O_3-SnO_2$ սենսորի արձագանքն էթանոլի տարբեր կոնցենտրացիաների նկատմամբ 250 °C ջերմաստիճանում:

Սլեզեդի համալսարանում (University of Szeged, Hungary) սինթեզվել է $\alpha-Fe_2O_3/FU\text{ՆՆ}$ (25:1) նանոկոմպոզիտային փոշի և մեր լաբորատորիայում (ԵՊՀ) էլեկտրոնաճառագայթային փոշեցրման եղանակով պատրաստվել բարակ զազագազայուն թաղանթ որպես էթանոլի սենսոր: Հանվել են $\alpha-Fe_2O_3/FU\text{ՆՆ}$ նանոկոմպոզիտային նյութի SeU պատկերները, որտեղ նանոփոշու հատիկների չափսերը ընկած են 100-110 նմ տիրույթում, իսկ նանոխողովակների տրամագծերը 30-40 նմ տիրույթում (Նկ. 10):




Նկ. 10 α - Fe_2O_3 /FUUV նանոկոմպոզիտային նյութի SEU պատկերները:

Հանվել է նաև α - Fe_2O_3 /FUUV նանոկոմպոզիտային նյութի ռենտգենյան պատկերը (Նկ. 11), որտեղ ակնհայտ երևում են α - Fe_2O_3 -ի պիկերը (012), (104), (110), (113), (024), (116), (122), (214) և (300): Ենթադրվում է, որ FUUV-ի պիկերը ռենտգենյան պատկերում չեն արտահայտվել դրանց քիչ լինելու պատճառով: Հանվել է սենտրի արձագանքը 300 °C-ում էթանոլի տարբեր կոնցենտրացիաների դեպքում: Ինչպես երևում է Նկ. 12-ից, սենտրն արձագանքել է սկսած էթանոլի 500 քրո կոնցենտրացիայից, որի դեպքում այն հասել է սվեդի քան 30-ի: Այս ջերմաստիճանում սենտրի արձագանքման և վերականգնման ժամանակները վարյկյանների կարգի են:




Նկ. 11 α - Fe_2O_3 /FUUV նանոկոմպոզիտային նյութի ռենտգենյան պատկերը:



Նկ. 12 α - Fe_2O_3 /FUUSn սենսորի արձագանքը 300 °C ջերմաստիճանում էթանոլի տարբեր կոնցենտրացիաների դեպքում:


SnO_2+2 ատ.% Co մետաղօքսիդային նանոկառուցվածքների հիման վրա պատրաստվել են էթանոլի սենսորներ և հետազոտվել դրանց զագագայունության պարամետրերը ՈւՄ ճառագայթների առկայությամբ: Սենսորի արձագանքը էականորեն աճել է աշխատանքային ջերմաստիճանի աճին զուգընթաց: Աշխատանքային ջերմաստիճանը 50 °C-ից մինչև 100 °C բարձրացնելիս սենսորի արձագանքը համապատասխանաբար բարձրացել է 2-ից մինչև 3.4: ՈւՄ ճառագայթների առկայությունն էականորեն բարելավել է սենսորի և արձագանքը, և արագագործությունը: Մասնավորապես 150 °C-ում սենսորի արձագանքը 300 ppm էթանոլի նկատմամբ 2.9-ից հասել է 3.5, իսկ արձագանքման և վերականգնման ժամանակները ընդհանուրից վայրկյանների (Նկ. 13):



Նկ. 13 $SnO_2<Co>$ սենսորի արձագանքն էթանոլի 300 ppm զոլորշիների առկայությամբ ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ և առանց դրանց՝ 150 °C ջերմաստիճանում:


$ZnO<La>$ թաղանթի հիման վրա պատրաստվել է էթանոլի ցածր կոնցենտրացիաների նկատմամբ բարձր զգայունությամբ օժտված ռեզիստիվ սենսոր: Պինդֆազային ռեակցիայի սինթեզման եղանակով պատրաստվել է փոշեցրման $ZnO+1$ ատ.% La թիրախ: Օգտագործելով պատրաստված թիրախը բարձրիաճախային

մագնետրոնային փոշեցրման եղանակով նստեցվել է բարակ զազազայուն նանոկառուցվածքային թաղանթ: Հանվել են $ZnO < La$ թիրախի SEU (SE, BSE) պատկերները և տարրային անալիզի արդյունքները VEGA TS 5130MM (microanalysis system of INCA Energy 300) սարքավորման միջոցով (Նկ. 14): Պատկերում ակնհայտ




Նկ. 14 $ZnO < La$ թաղանթի SEU (SE, BSE) պատկերները (a,b) և տարրային անալիզի (EDX) արդյունքները (c,d):

տեսանելի են լանթանի մասնիկները՝ գրեթե համասեռ բաշխված և սպիտակ գույններով: Սպեկտրում առկա են Zn, La, և O տարրերի ընգծված պիկերը, որը փաստում է La-ի իրական առկայությունը ցինկի օքսիդում: La-ի իրական կոնցենտրացիան 0.84 ատ.% է, որը փոքր ինչ տարբերվում է սկզբնական հաշվարկային թվից (1 ատ.%), որը, ենթադրվում է, կապված է սարքի սխալմունքով և տեխնոլոգիական պրոցեսների առանձնահատկություններով: Հանվել են նաև թաղանթի SEU պատկերները, որտեղ նաև հատիկների չափերը եղել են 20-40 նմ: Կատարվել է նաև $ZnO < La$ թաղանթի մակերևույթի տարրային քարտեզավորում, որը ապացուցում է Zn, Al, O, և La տարրերի հավասարաչափ բաշխումը: Հանվել են նաև սենտրի արձագանքման կորերը ժամանակի ընթացքում էթանոլի տարբեր կոնցենտրացիաների առկայությամբ (Նկ.15a) և սենտրի արձագանքի կախվածությունը գազի կոնցենտրացիայից (Նկ.15b): Սենտրը զգայունություն է ցուցաբերել սկսած էթանոլի ծայրահեղ ցածր կոնցենտրացիայից (0.7 ppm) և արձագանք/կոնցենտրացիա կախվածությունն ունի ակնհայտ գծային բնութագիր: Սենտրը նաև ցուցաբերել է արձագանքման բարձր կրկնելիություն արձագանքման/կերականգման 7 ցիկլիկ կորերի դեպքում (Նկ. 15c):



Նկ. 15 ZnO<La> սենսորի արձագանքն էթանոլի տարբեր կոնցենտրացիաների դեպքում (a), սենսորի արձագանքի կախվածությունը էթանոլի կոնցենտրացիայից (b) և սենսորի արձագանքի կրկնելիությունը ժամանակի ընթացքում 6.7 ppm էթանոլի դեպքում (c):




Նկ. 16 ZnO<La> թաղանթի գազազգայունության մեխանիզմն էթանոլի առկայությամբ:

ZnO<La> սենսորի գազազգայունության մեխանիզմը հատիկային մոդելի շրջանակներում ներկայացված է Նկ. 16-ում, որտեղ էթանոլի առկայությամբ տեղի ունեցող ռեակցիաների շնորհիվ փոխվում են հատիկների մերձամակերևութային աղբատացված շերտերի հաստությունները և հետևաբար թաղանթի դիմադրությունը, որը հանդիսանում է որպես սենսորի ազդանշան: Հայտնի է, որ

բարձր զգայունություն դիտվում է այն դեպքում, երբ հատիկների չափերը համեմատելի են կամ փոքր կյուբի Ռեբայի երկարությունից ($d \leq 2L_D$): Քանի որ L_D -ն ZnO -ի դեպքում մոտ 20-22 նմ է $250\text{ }^\circ\text{C}$ - $300\text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանային տիրույթում, իսկ մեր թաղանթում հատիկների չափերը 20-40 նմ, ապա սենսորի բարձր զգայունությանը կարելի է վերագրել այս հարաբերակցությունը [4]:


Պատրաստվել է $Fe_2O_3+0.1\text{ առ.}\% \text{ Sn}$ մետաղօքսիդային թիրախ պինդֆազային ռեակցիայի մեթոդով և մագնետրոնային փոշեցրման եղանակով նստեցվել են բարակ, ագեոտնի նկատմամբ զգայուն թաղանթներ: Ուսումնասիրվել են սենսորի գազազգայունության բնութագրերը ագեոտնի գոլորշիների առկայությամբ ՈւՄ ճառագայթների (365 նմ) ներքո և առանց դրանց: ՈւՄ ճառագայթների առկայությունն էականորեն բարելավել է սենսորի արձագանքը և արագագործությունը: Հանվել են $Fe_2O_3.Sn$ սենսորի գազազգայուն թաղանթի դիմադրության փոփոխությունը ժամանակի ընթացքում 450 ppm ագեոտնի գոլորշիների առկայությամբ ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ և առանց դրանց $250\text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանում (Նկ. 17): ՈւՄ ճառագայթների առկայությամբ գազային միջավայրում սենսորը հասել է հազեցման վիճակի բավական արագ, իսկ առանց ՈւՄ ճառագայթների հազեցումը բավական մեծ է: ՈւՄ ճառագայթներն արագացնում են քիմիական ռեակցիաների ընթացքը և խթանում գազ/կիսահաղորդիչ ավելի արդյունավետ փոխազդեցությանը:




Նկ. 17 $Fe_2O_3:Sn$ թաղանթի դիմադրության փոփոխությունը ժամանակի ընթացքում 450 ppm ագեոտնի գոլորշիների առկայությամբ ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ և առանց դրանց $250\text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանում:

$Fe_2O_3:ZnO$ (60:40 մոլ%) կյուբի հիման վրա նախագծվել և պատրաստվել է ռեզիստիվ նանոկառուցվածքային սենսոր: Հանգամանորեն ուսումնասիրվել են սենսորի գազազգայունության բնութագրերն ամոնիակի տարբեր կոնցենտրացիաների առկայությամբ աշխատանքային տարբեր ջերմաստիճաններում: Էլեկտրոնային մանրադիտակի միջոցով հետազոտվել է $Fe_2O_3.ZnO$ թաղանթի մակերևույթը և հանվել ՏԷՄ պատկերը: Ինչպես երևում է Նկ. 18-ից թաղանթն իրականում բաղկացած է նանոմասնիկներից և դրանց չափերը մոտ 50 նմ են: $Fe_2O_3:ZnO$ սենսորը զգայունություն է ցուցաբերել ամոնիակի ծայրահեղ ցածր կոնցենտրացիաների նկատմամբ: Մասնավորապես սենսորի զգայուն թաղանթի դիմադրությունը փոխվել է 1.5 և 2 անգամ ամոնիակի

համապատասխանաբար 27 ppm և 14 ppm կոնցենտրացիաների դեպքում (Նկ. 19): Հատկանշական է, որ սենսորի զգայունության նվազագույն շեմը (14 ppm) ավելի փոքր է, քան ամոնիակի թույլատրելի առավելագույն կոնցենտրացիան (50 ppm):




Նկ. 18 Fe₂O₃:ZnO թաղանթի SEU պատկերը:



Նկ. 19 Fe₂O₃:ZnO սենսորի դիմադրության փոփոխությունն ամոնիակի 27 ppm և 14 ppm կոնցենտրացիաների դեպքում 250 °C աշխատանքային ջերմաստիճանում:

Չորրորդ գլխում ներկայացված են մշակված ջրածնի պերօքսիդի սենսորների պատրաստման տեխնոլոգիական քայլերը և գազազգայունության պարամետրերի չափման արդյունքներն ունակային, վոլտամպերային և ռեզիստիվ եղանակներով: Այստեղ ներկայացված են նաև մեր կողմից մշակված ջրածնի պերօքսիդի ձկուն սենսորների բնութագրերը և ձկնան ազդեցությունը այդ պարամետրերի վրա: Մասնավորապես պինդֆազային ռեակցիայի սինթեզման եղանակով պատրաստվել են ZnO + 1 ատ. % La, ZnO + 2 ատ. % La և SnO₂ + 2 ատ. % Co կերամիկական թիրախներ և դրանք ենթարկել մեխանիկական ու քիմիական մշակման: Մտացված թիրախների տարրային անալիզը (NitonTM XL 3: GOLDD+ XRF Analyzer) ցույց է տվել, որ ZnO + 1 ատ. % La և ZnO + 1 ատ. % La թիրախներում լանթանիումի իրական կոնցենտրացիաները եղել են համապատասխանաբար 0.71 ատ.% և 1.47 ատ.%, իսկ SnO₂ + 2 ատ. % Co թիրախում կոբալտը եղել է 1.23 ատ. %: Այսպիսով ստացվել են Sn_{0.9877}Co_{0.0123}O₂, Zn_{0.9929}La_{0.0071}O և Zn_{0.9853}La_{0.0147}O բարադրություններ: Zn_{0.9929}La_{0.0071}O թիրախից նստեցվել են երկու տարբեր հաստությամբ թաղանթներ (80 նմ և 210 նմ) և չափվել դրանց գազազգայունության բնութագրերը 1800 ppm ջրածնի պերօքսիդի

գուրջիների առկայությամբ (42–45 % RH) տարբեր աշխատանքային ջերմաստիճաններում: Սենսորները ցուցաբերել են ընդգծված արձագանքման/վերականգնման կորեր: $Zn_{0.9929}La_{0.0071}O$ կառուցվածքը ցուցաբերել է լավագույն արդյունքը, ընդ որում, 210 նմ հաստությամբ թաղանթը ցուցաբերել է ավելի բարձր զգայունություն աշխատանքային ավելի ցածր ջերմաստիճանում:




Նկ. 20 $Zn_{0.9929}La_{0.0071}O$ սենսորի արձագանքման/վերականգնման կորերը 10 ppm ջրածնի պերոքսիդի դեպքում 220 °C-ում (a) և $SnO_2<Co>$ սենսորի արձագանքման/վերականգնման կորերը 75 ppm H_2O_2 -ի նկատմամբ 220 °C-ում (b):

Պրահայի քիմիական տեխնոլոգիաների համալսարանում (University of Chemistry and Technology, Prague) չափվել է այս սենսորի զգայունությունը ջրածնի պերոքսիդի նկատմամբ 220 °C-ում և համեմատվել գերմանական DRAEGER դետեկտորի արդյունքների հետ: Բնչպես երևում է Նկ. 20a-ից, մեր սենսորը բավական կրկնելի արձագանքել է 10 ppm գազի նկատմամբ, սակայն DRAEGER-ն այս կոնցենտրացիայի նկատմամբ զգայունություն չի ցուցաբերել: Նույն լաբորատորիայիում չափվել է նաև $SnO_2<Co>$ սենսորի զգայունությունը 75 ppm գազի նկատմամբ ևս 220 °C-ում: Այս դեպքում նույնպես ստացվել են զգազզգայունության բավարար արդյունքներ (Նկ. 20b):


Պինդֆազային ռեակցիայի սինթեզման եղանակով ստացվել են ZnO (wurtzite)-ի 5 թիրախներ հավելած 0.5; 1; 1.5; 2; 2.5 առ. % La_2O_3 -ով: $ZnO<La>$ թիրախներից VTC-600-2HD DC/RF Dual-Head High համակարգի միջոցով ստեղծվել են բարակ կանոնադրվածքային թաղանթներ: Չափվել է լանթանի տարբեր

կոնցենտրացիաներով հագեցած $ZnO<La>$ սենտրոնների արձագանքը 100 ppm H_2O_2 -ի առկայությամբ 150 °C-ում: Առավելագույն արձագանքը (120, ($S= R_{gas}/R_{air}$)) այս զազի նկատմամբ ցուցաբերել է $ZnO<2 \text{ ատ.}\% \text{ La}>$ կառուցվածքը (Նկ. 21):




Նկ. 21 $ZnO<La>$ թաղանթի արձագանքի կախվածությունը լանթանի կոնցենտրացիայից 100 ppm H_2O_2 առկայությամբ 150 °C-ում:

Պատրաստվել է $SnO_2+2 \text{ ատ.}\% \text{ Co}$ թիրախ պինդֆազային սինթեզման եղանակով: Թիրախից մազնետրոնային փոշեցրման եղանակով պատրաստվել է նանոկառուցվածքային սենտր H_2O_2 -ի գոլորշիների հայտնաբերման համար: Քանի որ թաղանթում հատիկների չափերը բավական մեծ ազդեցություն ունեն գազազայունության պարամետրերի վրա, հանվել է զգայուն թաղանթի SEU պատկերը Mira 3 LMH (Tescan) մանրադիտակի միջոցով: Ինչպես երևում է Նկ. 22-ից, թաղանթն ունի հատիկային կառուցվածք, որտեղ հատիկների չափերը մոտ 19 նմ են:




Նկ. 22 $SnO_2<Co>$ թաղանթի SEU լուսանկարը:

Հանվել են աշխատանքային ջերմաստիճանում (150 °C) սենտրի արձագանքման կորերը ջրածնի պերօքսիդի գոլորշիների տաքեր կոնցենտրացիաների դեպքում (Նկ. 23): Սենտրը զգայունություն (4) է ցուցաբերել 875 ppb ջրածնի պերօքսիդի նկատմամբ և այն կոնցենտրացիայի աճին գուզրնիթաց գծային աճել է մինչև 300:




Նկ. 23 $\text{SnO}_2\langle\text{Co}\rangle$ սենսորի արձագանքման կորերը H_2O_2 -ի տարբեր կոնցենտրացիաների առկայությամբ $150\text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանում:

$\text{SnO}_2\langle\text{Co}\rangle/\text{FԱՆՆ}$ կյուրի հիման վրա պատրաստվել են ձկուն գազային սենսորներ և հանգամանորեն ուսումնասիրվել դրանց գազազգայունության բնութագրերը ջրածնի պերօքսիդի տարբեր կոնցենտրացիաների առկայությամբ աշխատանքային տարբեր ջերմաստիճաններում: Չափվել է փոշեցրման 15 րոպե տևողությամբ ստացված $\text{SnO}_2\langle\text{Co}\rangle/\text{FԱՆՆ}$ թաղանթի հաստությունը Alpha-Step D-300 (KLA Tencor) պրոֆիլամետրի միջոցով: Ինչպես երևում է Նկ. 24-ից, թաղանթի հաստությունը մոտ 75 նմ է:



Նկ. 24 $\text{SnO}_2\langle\text{Co}\rangle/\text{FԱՆՆ}$ թաղանթի հաստության չափման արդյունքը:

Չափվել է սենսորի արձագանքը ջրածնի պերօքսիդի տարբեր կոնցենտրացիաների նկատմամբ $120\text{ }^\circ\text{C}$ աշխատանքային ջերմաստիճանում (Նկ. 25): Այս ջերմաստիճանում սենսորը ցուցաբերել է բարձր արձագանք՝ սկսած H_2O_2 -ի 4.4 ppm կոնցենտրացիայից: Այս կոնցենտրացիայի դեպքում զգայուն շերտի դիմադրությունը փոխվում է ավելի քան 44 անգամ, մինչև 17.5 ppm H_2O_2 -ի կոնցենտրացիայի դեպքում այն փոխվում է մոտ 478 անգամ: Տվյալ ջերմաստիճանում տարբեր կոնցենտրացիաների համար արձագանքման ժամանակները տասնյակ վայրկյանների կարգի են, մինչդեռ վերականգնման ժամանակները ընկած են րոպեների տիրույթում:




Նկ. 25 SnO_2/CO / PU/MS սենսորի դիսադրության փոփոխությունը ջրածնի պերօքսիդի տարբեր կոնցենտրացիաների դեպքում 120°C -ում:

Քիմիական նստեցման եղանակով պատրաստվել է $\text{SnO}_2/\text{PU}/\text{MS}$ ձկուն սենսոր և հետազոտվել դրա գազազգայունության բնութագրերը ջրածնի պերօքսիդի նկատմամբ: Նախապես պատվիրվել է $\text{SnO}_2/\text{PU}/\text{MS}$ -ների փոշի (75:25 wt.%, supplied Nanoshel-UK Ltd. UK) և այն նստեցվել 130 մկմ հաստությամբ պոլիմիդային տակդիրի վրա (Zhongcheng Insulating Material Ltd., China): Տակդիրի վրա հաստատուն դաշտերով մագնետրոնային փոշեցրման եղանակով նախապես նստեցվել են ոսկյա սանրաձև ծիմական հպակներ (Նկ. 26): $\text{SnO}_2/\text{PU}/\text{MS}$ փոշու և ստացված թաղանթի




Նկ. 26 $\text{SnO}_2/\text{PU}/\text{MS}$ սենսորի պատրաստման տեխնոլոգիական քայլերը և լուսանկարները:




Նկ. 27 SnO₂/PULN փոշու (a) և թաղանթի (b-d) ՏԷՄ պատկերները:

ՏԷՄ պատկերները հանվել են VEGA TS 5130MM սարքավորման միջոցով: Նանոխողովակները փոշում ակնհայտ երևում են, որոնք ունեն 15-20 մկմ տրամագիծ և 200-900 մկմ երկարություն (Նկ. 27): Հանվել է նաև թաղանթի ՏԷՄ պատկերը և կատարվել տարրային անալիզ: C-ի իրական կոնցենտրացիան SnO₂/PULN նյութում եղել է 24.47 կշռ.% (Նկ. 28), որը փոքր ինչ տարբերվում է եսխնական հաշվարկված արժեքից (25 կշռ.%): Սա կարող է պայմանավորված լինել չափող սարքավորման սխալմունքով:



Նկ. 28 SnO₂/PULN թաղանթի ՏԷՄ պատկերը (a) և տարրային անալիզի (EDX) արդյունքները (b):




Նկ. 29 SnO₂/FUUV թաղանթի արձագանքման կորերը ջրածնի պերօքսիդի տարբեր կոնցենտրացիաների դեպքում (a), սենսորի արձագանքի կախվածությունը ջրածնի պերօքսիդի գոլորշիների կոնցենտրացիայից (b), սենսորի դիմադրության փոփոխությունը 3 ppm ջրածնի պերօքսիդի առկայությամբ արտացոլված արձագանքման և վերականգնման ժամանակներով (c) և սենսորի արձագանքման և վերականգնման ժամանակների փոփոխությունը կախված ջերմաստիճանից (d):

Սենսորն առավելագույն զգայունություն է ցուցաբերել 75 °C-ում ՈւՄ ճառագայթների առկայությամբ (365 նմ), որտեղ արձագանքը գերազանցել է 400-ը, իսկ առանց ՈւՄ ճառագայթների առավելագույն զգայունությունը դիտվել 125 °C -ում (այս դեպքում զգայունությունը եղել է ավելի փոքր): Հաշվի առնելով, որ սենյակային ջերմաստիճանում ՈւՄ ճառագայթների առկայությամբ ևս սենսորը ցուցաբերել է բավական բարձր զգայունություն (50), ապա որպես աշխատանքային ջերմաստիճան ընտրվել է հենց այս ջերմաստիճանը: Հանվել է նաև սենսորի դիմադրության փոփոխության կորերը 1.5 ppm-ից 56 ppm տիրույթում, որտեղ արձագանքման արժեքները համապատասխանաբար եղել են 44-ից 300 (Նկ. 29a): Սենսորը ցուցաբերել է նաև գծայնություն ջրածնի պերօքսիդի կոնցենտրացիաների 1.5-20 ppm տիրույթում, իսկ ավելի բարձր կոնցենտրացիաների դեպքում նկատվել է որոշակի հազեցման միտում (Նկ. 29b): Ենթադրվում է, որ այս տիրույթում զգայուն շերտի մակերևույթն ամբողջությամբ հագեցնում է գազի մոլեկուլներով և դրանց հետագա ադսորբցիան անհնար է դառնում: Սենսորի արձագանքման և վերականգնման ժամանակները համապատասխանաբար եղել են 39 վ. և 140 վ., իսկ ջերմաստիճանի աճին զուգընթաց դրանք նվազել են (Նկ. 29c,d): ՈւՄ ճառագայթների կիրառումը գազային սենսորներում բերում է սենսորի սպառման հզորության նվազման: Մյուս կողմից, ճառագայթների առկայությամբ կիսահաղորդչում գեներացվում են էլեկտրոն/խոռոչ զույգեր, որոնք նվազեցնում են կիսահաղորդչի դիմադրությունը և

մասնակցում գազ/կիսահաղորդիչ քիմիական ռեակցիաներին: Ենթադրվում է, որ ՈւՄ ճառագայթներն ազդում են նաև քիմիական ռեակցիաների ակտիվացիայի էներգիաների վրա՝ դարձնելով դրանք ավելի բուռն և արագ [5]:

Հինգերորդ գլխում ներկայացված են ռազմական թունավոր ազդանյութերի (ՌԹԱ) և արյունաբերական թունավոր նյութերի (ԱԹՆ) նկատմամբ զգայուն սենսորների գազազգայունության բնութագրերը: Այստեղ ներկայացված են նաև ածխածնային նանոկառուցվածքների աճեցման տեխնոլոգիական նկարագրությունը և դրանց բնութագրերը: Այստեղ նկարագրված են նաև կերամիկական թիրախների սինթեզման տեխնոլոգիական քայլերը և բազմաբյուրեղային նյութերի կառուցվածքային բնութագրերը: Այստեղ ամփոփված են ռեզիստիվ սենսորների գազազգայունության մեխանիզմները և տարբեր գազերի քիմիական ռեակցիաները: Մասնավորապես մեր կողմից պատրաստվել են կոբալտով հագեցած և ածխածնային նանոխողովակներով ֆունկցիոնալացված SnO_2 հիման վրա քիմիական ազդանյութերի նկատմամբ բարձր զգայունությամբ օժտված ռեզիստիվ սենսորներ: Որպես գազազգայուն թաղանթ օգտագործվել են 2 ատ. % կոբալտով հագեցած կամ բազմապատ ածխածնային




Նկ. 30 ԲԱՆՆ/ՏՆՕ₂ սենսորի ղիմադրության փոփոխության կորերը ԳԳ-ի տարբեր կոնցենտրացիաների ազդեցությամբ 200 °C աշխատանքային ջերմաստիճանում: Ներդիրում ներկայացված է ԲԱՆՆ/ՏՆՕ₂ սենսորի զգայունության կախվածությունը ԳԳ-ի կոնցենտրացիայից 200 °C աշխատանքային ջերմաստիճանում:

նանոխողովակներով ֆունկցիոնալացված SnO_2 նանոկառուցվածքային թաղանթները, ինչը բերել է զգայունության էական աճի և աշխատանքային ջերմաստիճանի նվազման: ԲԱՆՆ/ՏՆՕ₂ հիման վրա սենսորի զգայունությունը


զգալիորեն ավելի բարձր է քան առանձին SnO_2 -ից և FALiV -ից պատրաստված սենսորների զգայունությունները, այսինքն տեղի ունի սիներգիկ ազդեցություն: Պրոպիլեն գլիկոլի (ՊԳ) բոլոր կոնցենտրացիաների դեպքում սենսորը ցուցաբերել է արագ արձագանք (վայրկյանների կարգի) և ընդունելի վերականգնման ժամանակ 200°C աշխատանքային ջերմաստիճանում (Նկ. 30): Սենսորի զգայունության կախվածությունը գազի կոնցենտրացիայից բոլոր դեպքերում գծային է: Սենսորի զգայունության գծային կախվածությունը ՊԳ-ի, երկմեթիլֆորմամիդի (ԵՄՖ) և ֆորմալդեհիդի (ՖԱ) կոնցենտրացիայից թույլ է տալիս ճշգրիտ որոշել մթնոլորտում վերը նշված գազերի իրական կոնցենտրացիաները:

$\text{SnO}_2<\text{Co}>$ սենսորը կարող է օգտագործվել ՌԹԱ-ի, մասնավորապես, զարինի և իպրիտի գոլորշիների հայտնաբերման համար: Կոբալտով հագեցած SnO_2 սենսորի զգայունությունը զարինի և իպրիտի գոլորշիների տարբեր կոնցենտրացիաների նկատմամբ չափվել է University of Defence -ում (Վիշկով, Չեխիա) NATO -ի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: $\text{SnO}_2<\text{Co}>$ սենսորը ցուցաբերել է զգայունություն իպրիտի գոլորշիների նկատմամբ սկսած 25 ppm կոնցենտրացիայից: Սենսորի զգայունությունը զարինի 12.5 ppm կոնցենտրացիայի դեպքում եղել է մոտ $15 \cdot 210^\circ\text{C}$ ջերմաստիճանում (Նկ. 31):



Նկ. 31 $\text{SnO}_2<\text{Co}>$ սենսորի դիստորտիայի փոփոխության կորերը (1) ՌԹԱ-ների զարինի (ա) և իպրիտի (բ) ազդեցությամբ: (2) և (3) կորերը ցույց են տալիս համապատասխանաբար գազի կոնցենտրացիան և աշխատանքային ջերմաստիճանը:


Խնդիր է դրվել մագնետրոնային փոշեցրման եղանակով ստանալ ոչ միայն նանոհատիկային թաղանթ, այլ նաև միաշափ կառուցվածքներ: Բարձրհաճախային մագնետրոնային փոշեցրման եղանակով հաջողվել է ստանալ ուղղահայաց ուղղությամբ դասավորված ածխածնի նանոխողովակներ: Երկու հաստատուն և փոփոխական դաշտերով աշխատող մագնետրոնային փոշեցրման համակարգը, որով աճեցվել են ածխածնային նանոկառուցվածքները, հնարավորություն է տալիս միևնույն վակուումային միջավայրում փոշեցրում կատարել երկու թիրախներից: Ածխածնային նանոկառուցվածքներն աճեցվել են հետևյալ եղանակով: Փոշեցրման




Նկ. 32 Ածխածնային նանոկառուցվածքների աճեցման տեխնոլոգիական ընթացքը:

փոփոխական դաշտերով գլխիկում տեղադրվել է բարձր մաքրությամբ գրաֆիտե թիրախ, իսկ հաստատուն դաշտերով գլխիկում բարձր մաքրությամբ նիկելե թիրախ: Խցիկում բարձր վակուումային մակարդակ ստանալուց հետո նիկելե թիրախից սիլիցիումային տակդիրի (Si(100)) վրա նստեցվել են մետաղական նանոհատիկներ կատալիզային սաղմնային կենտրոններ: Այնուհետև գրաֆիտե թիրախից փոշեցրվել են գրաֆիտե ատոմներ կամ նանոմասնիկներ, որոնք էլ կատալիզային հատիկների շուրջը կուտակվելով ձևավորել են նանոխողովակներ (Նկ. 32):

Միևնույն պրոցեսի ժամանակ փորձ է արվել ածխածնի նանոխողովակներ աճեցնել նաև սիլիցիումի չողորկած մակերևույթին: Այդ մակերևույթի SEU պատկերները ցույց են տվել, որ տակդիրի այս մակերևույթին նանոխողովակներ չեն աճել, այլ միայն կատել է գրաֆիտե ամորֆ թաղանթ: Si(100) մակերևույթին ուղղահայաց ուղղությամբ աճեցված ածխածնի նանոխողովակների SEU պատկերները ներկայցված են Նկ. 33-ում (University of Chemistry and Technology, Prague): Ենթադրվում է, որ աճեցված նանոհամակարգերն ունեն գրեթե բամբուկանման կառուցվածք և բաշխված են




Նկ. 33 Միլիցիումի ողորկած մակերևույթի SEI պատկերները մաքուր (a, c) և ածխածնի նանոխողովակների աճեցման դեպքում (b, d):




Նկ. 34 Աճեցված նանոկառուցվածքների Ռամանյան սպեկտրը:

բավական համասեռ: Նանոխողովակների տրամագծերն այնքան էլ իրարից չեն տարբերվում և ընկած են 15-25 նմ տիրույթում: Հանվել է նաև աճեցված նանոկառուցվածքների Ռամանյան սպեկտրը (University of Chemistry and Technology, Prague), որտեղ ակնհայտ առկա են հեքսագոնալ կառուցվածքին բնորոշ D (1367 սմ⁻¹) և G (1580 սմ⁻¹) պիկերը (Նկ. 34): Այստեղ առկա մյուս պիկը, որը համընկնում է մոտ 500 սմ⁻¹ ալիքային թվին, համապատասխանում է սիլիցումային տակդիրին:

Հաջողվել է սինթեզել Fe₂O₃:ZnO բազմաբյուրեղային կառուցվածք և հանգամանորեն հետազոտել դրա բյուրեղական հատկությունները: Նախ և առաջ հանվել են թիրախի ՏԷՄ պատկերները, որտեղ խոռոչների միջին տրամագիծը տատանվել է 5-10 մկմ տիրույթում: Հանվել են նաև մագնետրոնային եղանակով փոշեցրված թաղանթի ՏԷՄ պատկերները: Այստեղ հատիկների չափսերը ընկած են 10-20 նմ տիրույթում (Նկ. 35):



Նկ. 35 Փոշեցրված Fe₂O₃:ZnO թաղանթի ՏԷՄ պատկերները:



Նկ. 36 Մինթեզված Fe₂O₃:ZnO նյութի ՓԷՄ (a-c) և ընտրված տարածքի (էլեկտրոնի) դիֆրակցիոն (d) պատկերները:

